

<<Էդիթ պրինտ>> հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի աշխատանքների պլանավորումը նախադպրոցական կրթության կրթական չափորոշիչին համապատասխան

Հաստատություն՝ Ալափարս գյուղի մտուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Հակոբյան Լիդա

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հանրապետական կրթական չափորոշիչ

Մանկավաժական աշխատանքի պլանավորումը

Տարիքային խմբերի բնութագիրը

Խաղային գործունեության պլանավորումը նախադպրոցական տարիքում

Ուսումնական մեթոդներ

Բաց պարապմունք միջին խմբում

Եզրակացություն

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇՉԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից սոցիալ-մշակույթային իրադրության մեջ ավելի մեծ նշանակություն է ստանում կրթության համակարգում անձի ձևավորման և զարգացման արժևորումը: Երեխայի անձի զարգացումը (նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, պատասխանատվություն) պահանջում է կրթության հստակ համակարգի նախագծում, հիմքերի ձևավորում նախադպրոցական տարիքում: Ակնհայտ է, որ ինչքան փոքր է երեխան, այնքան նա զգայուն է մեծահասակի հետ փոխհարաբերության ժամանակ և հեշտությամբ է ենթարկվում մանկավարժական գործունեության ազդեցությանը:

Հանրապետությունում հիմնադրվել են նախադպրոցական հաստատություններ, որոնք չունեն հստակ ծրագրեր կամ առաջադրվում են տարբեր ծրագրերով: Սակայն մանկավարժական գործունեությունը չի կարող արդյունավետ լինել, եթե հիմնված չի հանրակրթական ծրագրերի, առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների նվազագույն պահանջների յուրացման վրա: Ուստի կարևոր է, որ յուրաքանչյուր նախադպրոցական մանկավարժ գործի կրթական պետական չափորոշիչին համապատասխան, նախապես պլանավորելով իր ախատանքը՝ կիրառելով ուսուցման և դաստիարակության ժամանակակից արդյունավետ մեթոդներն ու տեխնոլոգիաները:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Հանրապետական կրթական չափորոշիչն հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից, այն կանոնակարգող փաստաթուղթ է: Հանրակրթության չափորոշիչներով է պայամանավորված և որոշվում այն հիմնական բովանդակությունը, որ տրվում է կրթական հաստատություններում: Նախադպրոցական կրթության չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշիչի բաղադրամասն և սահմանում նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի ներդաշնակ զարգացման և սոցիալականացման: Այն երեխայակենտրոն կրթության հիմքն է, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու երեխայի անձը, հենվելու ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառությունը:

Չափորոշիչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների տարիքային զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, խաղի գերակայությունը և խաղային գործունեության անհատականացումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, ֆիզիկական միջավայրի ապահովումը:

Ժամանակակից հասակության մեջ նախադպրոցական դաստիարակությունը՝ որպես շարունակական կրթության սկզբնական աստիճան, ընտանիքի հետ համագործակցելով իրականացնում է նախադպրոցական տարիքի երեխաների բնականոն, ներդաշնակ և համակողմանի զարգացումը:

Նախադպրոցական կրթության ռազմավարությունը կյանքի է կոչվում պարբերաբար լրամշակվող ժամանակահունչ ծրագրերի միջոցով, որոնց հիմնական խնդիրը երեխայակենտրոն կրթության ապահովումն է և ժամանակակից հասարակության մեջ երեխայի կյանքի նախապատրաստումը:

Տարիքային բոլոր խմբերին հասցեագրված «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիրը» սահմանում է նախադպրոցական կրթության նպատակներն ու խնդիրները, երեխայի կրթությունն իրականացնող հաստատություններին և ընտանիքներին ներկայացվող պահանջները:

Չափորոշիչի հիման վրա կատարվում են դիտարկումներ: Այսինքն՝ չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի, մեթոդական ուղեցույցների մշակման, դրանք գործնականում ներդրման և երեխայակենտրոն կրթության իրականացման հիմք:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Կրթական պլանավորումը մի գործընթաց է, որում կազմակերպվում, ձևակերպվում և համակարգվում են ուսուցչի մանկավարժական մեթոդաբանությունները և ուսումնական ծրագրի առանձնահատուկ պայմանները: Սա թույլ է տալիս նախապես ստեղծել գործողությունները և ռեսուրսները՝ հասնելու կոնկրետ նպատակներին:

Կրթության պլանավորումը պատասխանատու է կրթության նպատակների և խնդիրների հստակեցման համար: Պլանավորման շնորհիվ հնարավոր է սահմանել, թե ինչ պետք է անել և ինչ ռազմավարություններով: Պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ կարևոր բաղադրիչները.

1. Բովանդակություն
2. Նպատակ
3. Ընթացակարգ
4. Օգտագործվող ձևաչափ
5. Նվաճումներ
6. Գնահատում

Ուսումնական գործընթացը պլանավորելիս մանկավարժը հիմնում է 3 հիմնական աղբյուրների վրա՝

1. Անհատական երեխաների դիտում, որն ուսուցիչը սահմանում է յուրաքանչյուր երեխայի համար:
2. Որոշակի խմբով երեխաների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ:
3. Երեխաների և նրանց զարգացման վերաբերյալ ուսուցչի ընդհանուր գիտելիքներ:

Նախադպրոցական դաստիարակության և ուսուցման գլխավոր խնդիրներն են երեխաների ֆիզիկական, բարոյական, գեղագիտական դաստիարակությունը, մտածողության ու խոսքի զարգացումը, անհրաժեշտ վերլուծություններ անելու կարողությունների ձևավորումը, հաղորդակցման կարողությունների ձևավորումը և ուսման նկատմամբ հետաքրքրության դաստիարակումը: Այս խնդիրների արդյունավետ լուծման և դրական արդյունքի հասնելու համար դաստիարակը ուսուցման գործընթացը պլանավորելիս հիմնվում է հետևյալ տարի-

քային խմբի ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունների վրա օգտագործելով ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Պարապմունքերի պլանավորման գործընթացում ելեկետային է համարվում երեխաների ուսումնական խաղային բեռնվածության երաշխավորվող չափի, երեխայկենտրոն ուսուցման ու դաստիարակության շարունակական կրթության ապահովման պահանջը:

Մանկապարտեզում երեխայի դաստիարակության և ուսուցման կազմակերպիչը, դեկավարն ու պատասխանատուն դաստիարակն է, որի մասնագիտական և անձնային որակներով են պայմանավորված երեխաների զարգացման ընթացքը և արդյունավետությունը:

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ (2-3 ՏԱՐԵԿԱՆ)

Այս տարիքային խմբում դաստիարակության կարևորագույն խնդիրը երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդում է, նրանց օրգանիզմի կոփումը, զվարթ, ակտիվ և հավասարակշռված տրամադրության ապահովումն է, ինքնասպասարկման նախնական ունակությունների ձևավորումը, հիմնական շարժումների և ձեռքերի շարժումների զարգացումը: Այս տարիքում երեխաների զարգացման վարքի մեջ կատարվում են էական փոփոխություններ: Վճռական նշանակություն ունի շփումը մեծերի հետ. երեխայի մոտ զարգանում է ընդօրինակելու ունակությունը, որը մեծ նշանակություն ամբողջ վարքի կատարելագործման և մասնավորապես խոսքի տիրապետման ու խաղային գործունեության զարգացման համար: Այս տարիքում երեխաների մոտ կատարելագործվում է տեսողական, լսողական և շոշափոխական ընկալումները. ձևավորվում են շրջապատող առարկաների և դրանց էությունից վերաբերյալ պատկերացումները: Երեխան սկսում է խոսել նախադասություններով և խոսքը նրա համար դառնում է մեծերի հետ շփվելու միջոց:

Այս տարիքում դաստիարակը երեխաներին սովորեցնում է գործել ինքնուրույն, խրախուսում է ամենափոքրիկ հաջողությունն անգամ:

Հատուկ ուշադրություն է դարձվում մեծի պահանջներին ենթարկվելու և դրանք կատարելու ունակությունների վրա: Դաստիարակը պայմաններ է ստեղծում, որ երեխաները կարողանան խաղալ խաղալիքներով, կառուցողական և բնական նյութերով, շատ շարժվել, դիտել շրջապատը և նկարներ: Այս ամենից բացի, երեխաների ինքնուրույն գործունեության զարգացման վրա մեծ ազդեցություն են ունենում նաև այուժետային խաղալիքներով խաղերը:

ԿՐՏՍԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ (3-4 ՏԱՐԵԿԱՆ)

Այս տարիքում շարունակում է աճել և զարգանալ երեխայի օրգանիզմը: Դաստիարակի ինդիքն է պահպանել երեխայի առողջությունը, հոգ տանել օրգանիզմի հետագա աճման և կոփման, հավասարակշռված և էմոցիոնալ վարքի ձևավորման համար:

Այս տարիքում կատարելագործվում են տարրական ինքնասպասարկման ունակությունները, դաստիարակը ներգրավում է երեխաներին աշխատանքային գործունեության մեջ:

Բարելավվում են շարժումների որակը և երեխան դառնում է ավելի ճարպիկ ուտելու, հագնելու, խաղալու գործում, պարապմունքների ժամանակ ավելի ինքնուրույն: Երեխայի մոտ զարգանում է իր ցանկությունները և գործողությունները զսպելու, արգելակելու ունակությունը, բայց նա դեռ ընդունակ չէ երկարատև սպասման, չի կարող երկար ժամանակ միևնույն կեցվածքը պահպանել, արագ հոգնում է միանման շարժումներից:

Այս տարիքում արագ զարգանում է խոսքը, հարստանում է բառապաշարը: Խաղերի մեջ դառնում են ավելի ինքնուրույն: Ծագում են համատեղ, համագործակցային խաղեր:

Անհրաժեշտ է երեխաների մոտ ձևավորել դրական–սոցիալական զգացմունքներ, սովորեցնել, որ պահպանեն վարքի պարզագույն կանոնները կոլեկտիվում: Երեխան պետք է սիրով կատարի դաստիարակի առաջարկությունները(զնալ ուտելու, ձեռքերը լվալ, պահպանել սահմանված կարգը, խոսել կամաց, հանգիստ պառկել, մյուսներին չխանգառել): Նա պետք է ողջունի, հրաժեշտ տա և իր ցանկությունները բառերով արտահայտի:

Այս տարիքում խաղերը մեծ նշանակություն ունեն: Խաղը դառնում է ավելի երկարատև և կենտրոնացված: Երեխաներին առաջարկվում է տարատեսակ խաղեր՝ ապահովելով կենսուրախ տրամադրություն, երեխաների ակտիվ վարք: Խաղերը նպաստում են շարժումների ու խոսքի զարգացմանը, համագործակցային և ստեղծագործական կարողությունների ձևավորման: Խոսքը դառնում է ավելի կապակցված, հարստանում է ակտիվ բառապաշարը: Երեխան լավ է հասկանում մեծի խոսքի իմաստը և պատասխանում է տրված հարցերին:

Այս տարիքում զարգանում է նաև երեխաների շարժումները, նրանք սկսվում են շարժվել հրահանգին հասձայն, սովորեցնում են համաձայնեցնել շարժումները մյուս երեխաների հետ և փոխել շարժումների տեմպը, ուղղությունը, բնույթը ըստ ազդանշանի:

ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

Միջին նախադպրոցական տարիքը բավական բարդ ժամանակաշրջան է երեխաների համար: Այս մեկ տարվա ընթացքում տեղի են ունենում ֆիզիոլոգական և հոգեկան զարգացման նկատելի որակական փոփոխություններ: Եթե տարեսկզբին փոքրիկն իր ցուցանիշներով նման է կրտսեր նախադպրոցականին, ապա տարեվերջին նա կարծես դառնում է ավագ նախադպրոցական:

Երեխայի քաշն աճում է: Մկանային հյուսվածքից բացի, արագորեն զարգանում է ոսկրային համակարգը: Մեծանում է երեխայի ակտիվությունը, նպատակաուղղվածությունը: Շարժումները դառնում են բազմազան և համակարգված: Նրա արարքներն առավել տրամաբանված են, ավելի կանխատեսելի: Մեծահասակի օգնությամբ նա ճանաչում է աշխարհն իր ամբողջ բազմազանությամբ:

Բաձրանում է խոսքի ղեկավարող դերը: Երեխաները սկսում են խաղալ միասին, սիրով կատարում են աշխատանքները, հանձնարարությունները, օգնում են մեծերին: Հարստանում է բառապաշարը, խոսքը դառնում է կապակցված և հաջորդական: Ջարգանում է երեխայի մտածողությունը. ըստ արտաքին նշանների ընդհանրացումներ կատարելու հետ միասին, երեխաները սկսում են առանձնացնել առարկաների ավելի էական, ֆունկցիոնալ նշանները:

Երեխայի մեջ ստեղծվում է հուզական վերաբերմունք իր և շրջապատի մարդկանց կողմից կատարված լավ ու վատ արարքների նկատմամբ: Սկսում են կազմավորել մանկական կոլեկտիվի էլեմենտար ձևեր:

Երեխաները այս տարիքում դառնում են ավելի ինքնուրույն ինքնասպասարկման գործում: Մովորում են վարվեցողության կանոնները: Դաստիարակի հսկողությամբ երեխաները կարգ ու կանոն են պահպանում խմբասենյակում և բակում:

Ամենակարևոր և առաջատար գործունեությունը, որն ի հայտ է գալիս այս տարիքում, այուժետային խաղն է: Խաղի ընթացքում տիրապետող է զկայական այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է երեխայի ապրումակցային խառնվածքի ձևավորմանը: Այն ավելի մոտ է իրականությանը, երեխան վերարտադրում է իրեն լավ ծանոթ իրավիճակներն ու հարաբերությունները:

Այս տարիքում երեխան արդեն անհատ է, նա դրսևում է ամեն ինչի և բոլորին նմանվելու բուռն ցանկություն:

Ուսուցման և դաստիարակության շնորհիվ երեխան դրսևորում է պարզագույն գիտակցություն և կամային ուշադրություն: Նախադպրոցականը կարողանում է ըմբռնել, մտա-

պահել, հիշել, վերարտադրել, սովորել խաղի կանոնները, ճանաչել շրջապատող առարկաներն ու երևույթները: Միաժամանակ ձեռք է բերում որոշակի ունակություններ, հմտություններ, սովորություններ: Նրանք ընդունակ են գիտակցաբար համաձայնեցնելու սեփական վարքը ընկերների վարքի հետ և գնահատելու հնարավորությունը:

ԱՎԱԳ ԽՈՒՄԲ (5–6 ՏԱՐԵԿԱՆ)

Այս տարիքում երեխայի ֆիզիկական տեսքը աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Կատարվում է մարմնի համաչափություն փոփոխություններ, զգալիորեն մեծանում է շարժունակությունը: Այդ հասակի երեխաներին բնորոշ է ֆիզիկական մեծ ակտիվություն, նրանք չեն կարող նստել, դադար չեն տալիս իրենց շարժումներին, կարիք են զգում միշտ փոփոխելու իրենց մարմնի դիրքը և գործունեության տեսակը: Էական փոփոխություն է կատարվում մտածողության բնագավառում: Զարգանում է հետաքրքրասիրությունը: Սեփական պրակտիկ փորձի և մտածողության տրամաբանական ձևերի յուրացման հիման վրա երեխաները սկսում են իրենք մտահաղացումներ անել: Աստիճանաբար դրսևորում են ուսումնական գործունեության պարզ ձևեր: Երեխան ընդունակ է դառնում հասկանալու և կատարելու դաստիարակի կողմից դրված ուսումնական խնդիրը, նա ձգտում է ինչ–որ նոր բան իմանալ, ձեռք բերել այս կամ այն հմտությունը: Իր բովանդակությամբ ավելի վառ ու հարուստ է դառնում երևակայությունը, որը սակայն դեռ կապված է լինում այն բանի հետ, ինչ երեխան տվյալ ընթացքին ըմբռնում կամ կատարում է: Էական առաջխաղացում է կատարվում մտածողության բնագավառում: Երեխաները սկսում են ընդհանրացնել առարկաները ոչ միայն ըստ ֆունկցիայի, այլ նաև ըստ նյութի, ծագման և այլն:

Երևան է գալիս պատասխանատվության զգացում դեպի հանձնարարված գործը, զարգացնում է մտերմության զգացումը հասակակիցի նկատմամբ, ավելի խորը և գիտակցական է դառնում սերն ու հարգանքը մեծերի նկատմամբ:

Ճանաչողական գործունեությունը ինտենսիվ զարգացնում է, սակայն ինտելեկտուալ զգացմունքները դեռ շատ անկայուն են: Երեխան հեշտությամբ է բավարարվում իր հետաքրքրությունը իրեն գրավող առարկային մակերեսորեն ծանոթանալու միջոցով:

Նպաստավոր պայմաններում և ճիշտ դաստիարակության դեպքում, երեխաների մեջ երևան է գալիս հարգանք դեպի շրջաատողների աշխատանքը, մեծերին և ընկերներին օգնելու ձգտումը և հասարակական գործունեությանը մասնակցելու ցանկությունը:

Այս տարիքում երեխան պետք է իմանա էթիկետի կանոնները՝ բարևել, հրաժեշտ տալ, շնորհակալություն հայտնել և մշակույթային վարք դրսևորել:

Այս տարիքում զարգացումն ունի բնորոշ առանձնահատկություններ:

1. Ուշադիր ուշադրություն պետք է դարձնել նպատակային ուսուցմանը: Եթե նախկինում ուսուցումն ուներ կամային բնույթ, ապա այժմ կարևոր է նախադպրոցական տարիքի երեխային սովորեցնել այն, ինչ իրենից պահանջվում է:
2. Հիշել, որ նա դեռ խաղերի կարիք ունի: Թեև կողմակալությունը պատրաստվա՞ծ է դըպրոցին նախապատրաստվելու համար, բայց դրանում խաղային գործունեությունը կարևոր մասն է կազմում:
3. Այս տարիքում երեխան դեռևս վատ կողմնորոշված է ժամանակի մեջ և չգիտի, թե քանի րոպե է ծախսում որևէ գործունեության վրա:
4. Նախադպրոցական տարիքը հիշում է հետաքրքրություն առաջացնող բաները, բայց նա նաև արագ մոռանում է դրանք:

Այս տարիքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխայի 5 հմտությունների զարգացմանը:

1. Ուշադրություն
2. Մտածողություն
3. Երևակայություն
4. Հիշողություն
5. Ընկալում

Հետևաբար պարապմունքների ժամանակ կազմակերպվող խաղերը պետք է նպաստեն այդ հմտությունների զարգացմանը:

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Նախադպրոցական հասակի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոց են դիդակտիկ խաղերը:

Խաղերը համարվում են երեխայի իր իսկ ուսուցման և դաստիարակության համակարգաստեղծ բաղկացուցիչների մի մասը: Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, ուստի և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքի միջոցով: Պարապմունք-

ների խաղային բնույթը շարժում է երեխաների հետաքրքրությունը, լարում նրանց ուշադրությունը, իսկ ուսուցողական խնդիրը լուծվում է խաղի ընթացքում:

Նախադպրոցական տարիքում առաջատարը խաղային գործունեությունն է, և ոչ թե նրա համար, որ այն առավել հաճախ է կրկնվում, երեխայի զարգացումն այս փուլում, հակառակը, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխան օրվա ընթացքում մոտավորապես 3 ժամ է տրամադրում խաղին: Նշանակում է խնդիրը քանակական այն ձևի մեջ չէ, որ զարգացնում է խաղը նախադպրոցական տարիքում, պարզապես խաղի զարգացմամբ տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները երեխայի հոգեկանում և նրանում զարգանում են հիմնական այն գործընթացները, որոնք նախապատրաստում են երեխային իր զարգացման նոր, առավել բարձր աստիճանի:

Երեխայի զարգացման գործընթացում էական նշանակություն ունեն դիդակտիկ խաղերն ու շարժախաղերը, որոնցում ձևավորվում են երեխաների ճանաչողական գործընթացները:

Դիդակտիկ խաղերը մանկապարտեզային խմբերում կիրառվում են պլանավորված ձևով և այդ պատճառով էլ դրանք դառնում են դաստիարակության և ուսուցման կարևոր օղակներից մեկը: Ով քանի որ դիդակտիկ խաղերն օգնում են նոր նյութի յուրացմանը և անցած նյութի ամրապնդմանը, ուստի դրանք համարվում են պարապմունքի մի ձև:

Դիդակտիկ խաղերն կարառվում են տարբեր նպատակներով.

1. Որպես նոր գիտելիքի հաղորդման միջոց
2. Վարժությունների և գիտելիքների ամրապնդման միջոց
3. Գիտելիքների ստուգման միջոց
4. Որպես պրակտիկ գործունեություն
5. Ճանաչողական գործունեության ակտիվացման միջոց
6. Որպես անհատական գործունեություն

Դիդակտիկ խաղերի դաստիարակչական նշանակությունը նախևառաջ նրանց բովանդակության մեջ է: Խաղալիս երեխան ձեռք է բերում ինքնատիրապետում, ինքնավերահսկում, սեփական գործողությունների և հավատ՝ իր ուժերի նկատմամբ:

Կրտսեր խմբերում դիդակտիկ խաղերը մեծ մասամբ անցկացվում են բնական նյութերով և զանազան խաղալիքներով:

Միջին խմբում նույնպես կարելի է դիդակտիկ հատուկ խաղալիքներ, սեղանի տպագիր խաղալիքներ և զանազան առարկաներ: Տարիքային այս խմբում խաղերի միջոցով ճշտվում և ընդլայնվում են շրջապատի մասին երեխաների ունեցած պատկերացումները:

Ավագ խմբում խաղերը ծառայում են մայրենի լեզվի, շրջապատին ծանոթացնելու ծրագրային պահանջների կատարմանը, ինչպես նաև հոգեկան գործընթացի զարգացմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների համար առաջատար են համարվում զարգացնող խաղերը: Դրանցից են այն խաղերը, որոնց կարևոր կառուցվածքային բաղադրիչներն են առարկաների հետ գործողության բնույթն ու կերպը, համագործակցության միջոցներն ու ձևերը, մարդկանց հետ շփումն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը: Այս խաղերի նպատակը ոչ միայն գիտելիքների սովորական փոխանցումն է, այլև երեխաների ակտիվ, գիտակցված գործունեությունը, հոգեկան որոշակի գործընթացների զարգացումը, սոցիալական կարևոր փորձի փոխանակում:

Խաղերի (խաղային վարժությունների) միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությունը մանկավարժի գործն է, որի դիրքորոշումը խաղի ընթացքում ի հայտ է գալիս իր ներաշխարհի լավատեսական բնույթով, որն առավել լուսավոր և ուրախ է, քան իր էությունը: Երեխաներին սովորաբար հետաքրքրում են տարբեր նպատակաուղղվածություններ ունեցող խաղերը: Դրա համար անհրաժեշտ է՝

1. Նախապատրաստել խաղի անցկացման տեղը,
2. Ընտրել որակյալ դիդակտիկ նյութեր,
3. Ապահովել երեխային առաջադրվող պահանջները, այն՝ ճանաչողությունը, շփումը, խաղը, ինքնահաստատումը,
4. Խաղն անցկացնել հմտորեն, ուրախ և տարբեր հետաքրքիր միջոցներով:

Խաղային գործունեությունը այն տեսակն է, որը կատարվում է, ոչ թե հանուն նյութական և այլ նպատակների, այլ հենց հանուն խաղային գործողությունների: Այս իմաստով իրական խաղն ինքնանպատակային գործողություն է: Խաղն ինքնին հաճույքի աղբյուր է երեխայի համար՝ անկախ արդյունքից, որը թույլ է տալիս հաճելի ապրումներ ունենալ և զարգանալ: Երեխան մինչև դպրոցական հասակը անցնում է խաղի զարգացման որոշակի փուլեր, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն դերն ու նշանակությունը ունի երեխայի զարգացման կոնկրետ տարիքային փուլում:

Այսպես՝ խաղի տեսակներն են՝

1. **Ֆունկցիոնալ** անվանում են այն խաղերը, որոնք կատարվում են խաղային գործողությունների պատճառած հաճույքի հասնել: Այսպիսի խաղը բնորոշ է վաղ մանկության շրջանին: Այս խաղերը նպաստում են երեխաների մոտորիկայի զարգացմանը, որն իր հերթին չափազանց կարևոր է խոսքի զարգացման համար: Օրինակ երբ երեխան կրկնում է որոշ գործողություններ:

2. **Միմվոլիկ խաղերը** ակտիվության այն տեսակներն են, որոնցում երեխան օգտագործվող առարկաներին այլ իմաստ է վերագրում: Այս խաղերը նպաստում են երևակայության և մտածողության զարգացմանը: Օրինակ մի քանի խորանարդիկներն իրար վրա դասավորելով պատկերացնում է աշտարակ, կամ կաթսայի կափարիչը՝ դեկ:
3. **Դերային խաղեր**, երեխան սկսում է խաղալ 4 տարեկանից, երբ յուրացնում է որոշակի սոցիալական դերեր, անցնում է սեռադերային նույնականացման փուլը: Դերային խաղերը նպաստում են երեխայի մոտ սոցիալապես ընդունված դերերի և դրանց համապատասխան վարքաձևերի յուրացմանը, հուզական ոլորտի զարգացմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման գործընթացն իրակացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նըպատակին հասնելու միջոց է: Այն գործիք է դաստիարակի համար կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին: Ներկայումս նախադպրոցական կրթության մեջ լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման մեթոդներ (փոխգործուն կամ ինտերակտիվ):

- **Խաղային մեթոդների** ժամանակ ուսուցանվող նյութը տրվում է տարբեր խաղերի, դերային գործողությունների միջոցով: Այն ունի բազմաթիվ առավելություններ:
- Ուսուցման **գործնական մեթոդների** խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը:
- **Ակտիվ ուսուցման մեթոդները** (փոխգործուն) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիքը հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ինքնուրույն կողմնորոշմանը:

Այս մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Այն համապատասխանում է երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ

Թեման՝ <<Հաց>>

Պարապմունքի նպատակը

Երեխաներին տալ գիտելիքներ մարդկության ամենամեծ բարիքի՝ հացի, նրա ստացման և ստեղծման վերաբերյալ: Ներկայացնել, թե ինչքան շատ մարդիկ են ներգրավված մի կտոր հացի ստեղծման աշխատանքում:

Սեր և հարգանք դաստիարակել հացթուխի նկատմամբ, կարողանալ ըստ արժանավոյն գնահատել նրա աշխատանքը, խնամքով վերերերվել հացի ամեն մի փշուրի նկատմամբ՝ հացի փշուրն էլ հաց է:

Անհրաժեշտ պարագաներ՝ գյուղատնտեսական մեքենաների, ցորենի արտի, հացատեսակների, հացի ստացման ուղին պատկերող նկարներ, այլուր, ջուր, խմոր, ցորիենի հասկ, զոգնոց, հացի տարբեր տեսակներ:

Պարապմունքի ընթացքը

Խմբասենյակը ձևավորված է հասկերով: Մի անկյունում դրված են հացատեսակները, մեկ այլ անկյունում ցածրիկ սեղան է՝ վրան գրտնակ, այլուր, խմոր:

Խթանման փուլ

Դաստիարակը պարապմունքը սկսում է հանելուկով.

Գարնանը գետնին

Եվ ամբողջ տարի սեղանի վրա:

Երեխաները գուշակում են հանելուկը, դաստիարակը ներկայացնում է հացի ստեղծման պատմությունը. շատ վաղուց մարդիկ բերք չեն աճեցրել, կյանքը նրանց համար շատ դժվար է եղել: Եվ ահա մի օր նրանք գտնում են ցորենի սերմի մի հատիկ, օրհնում են և այն սուրբ անունով Հաց են անվանում:

Իմաստի ընկալման փուլ

Այնուհետև դաստիարակը ներկայացնում է հացի ստացման ուղին՝ համապատասխան նկարների շարք ցուցադրելով՝ ցորենի արտ, սերմերի ցանք, վարելն ու հասկերի հավաքելը համապատասխան գյուղատնտեսական մեքենաների միջոցով, բեռնատար մեքենաներով հացահատիկի տեղափոխումը ալրադաց, հացաթխումը հացի փռում, թխված հացը՝ խանութի վաճառասեղանին:

Թարմացնող վարժություն

Մնջախաղի միջոցով բեմականացնել տարբեր իրավիճակներ (ցորենի աճը, խմոր հունցելու, այլուր մաղելու, հաց թխելու հաջորդականությունը):

Դաստիարակ

Մինչև հացը

Մի լավ աղում

Հաց է դառնում՝

Ու նրանից

Տաք քրտինք են

Հաց են թխում...

Նրան խառնում,

Հաց սրբազան,

Վարում, ցանում,

Հաց կյանք մի բուռ,

Ջրում, քաղում...

Հաց ինկահամ, անուշաբույր:

Ցորենն ապա

Կշռադաստման փուլ

Դաստիարակը հարցերով ամփոփում է դասը.

- Երբևիցե տեսն՞լ եք, ինչպե՞ս են թխում լավաշը:
- Հացի ի՞նչ տեսակներ գիտեք (լավաշ, բոքոն, մատնաքաշ, պուրի, բլիթներ...):
- Ինչպիսի՞ն է հացը (անուշահամ, համով ու հոտով, սև ու սպիտակ, նուրբ):
- Ինչպե՞ս ենք անվանում այն մարդուն, ով հաց է թխում (հացթուխ):
- Ինչպե՞ս եք վարվում հացի փշրանքների հետ (կերակրում ենք ծիտիկներին):

Վերջում պարապմունքը ավարտել աշխուժացնող խաղով՝ <<Քաղցր հաց>>.

Այսօր Լիլիթի տոնն է,

Նրա ուրախ օրն է:

Պատրաստել ենք քացոր հաց,

Այսպիսի բարձրությամբ,

Այսպիսի ցածրությամբ,

Այսպիսի լայնությամբ,

Այսպիսի նեղությամբ:

Քա՛ղցր հաց, քա՛ղցր հաց,

Ում որ ուզես, նրան տաս:





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես ընտրեցի և հնարավորինս փորձեցի ներկայացնել մանկավարժական աշխատողի աշխատանքների պլանավորումը նախադպրոցական կրթական պետական չափորոշիչին համապատասխան, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յորքանցյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործըթացը:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը: Ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը հենված է երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլին բնորոշ հոգեբանական և ֆիզիկական առանձնահատկությունների վրա:

Մանկավարժական պրակտիկան ցույց է տվել, որ թեմատիկ պլանավորյման սկզբունքի կիրառման դեպքում հնարավորություն է ընձեռվում էականորեն կրճատել երեխաների ծանրաբեռնվածությունը, փոխարենը՝ այն տրամադերլ կազմակերպվաղ խաղերին, առողջարարական տարաբնույթ միջոցառումներին:

Վերջապես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ կիրառված մեթոդներն ու միջոցները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից:

Մասնավորապես մեր մանկապարտեզում ուսումնադաստիարակչական գործընթացը անցկացվում է հիմնականում նկարների, պաստառների օգնությամբ: Դիդակտիկ նյութերի ավելի մեծ բազմազանությունը հնարավորություն կտար էլ ավելի արդյունավետ անցկացնել կրթադաստիարակչական գործընթացը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան ուսումնական-մեթոդական ձեռնարկ <<Խոսքի զարգացման պարապմունքերը մանկապարտեզի միջին խմբում>>, 2013
2. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր (4-5 տարեկաններ)
3. Մանկապարտեզի ավագ խմբի համալիր ծրագիր (5-6 տարեկաններ)
4. Նախադպրոցական կրթադաստիարակչական համալիր ծրագիր ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Լ. Մանուկյան և ուրիշներ
5. Նախադպրոցական կրթական համակարգում մանկավարժական գնահատում Ա. Հովհաննիսյան, 2008
6. Ա. Հովակիմյան <<Իմ մանկապարտեզը>>, 1991
7. Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում, Լ. Սմբատյան, 2014